ՄԱՀՈՒԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւէն և վերջ)

ՀԱԶԱՐԱՊԵՏ ՍԻՖԻԼԻՍ.— Տէր Սպարապետ և ընկերներ։ Անցեալ ժողովին մէջ դուք լսեցիք իմ փաստերս Մալարիայի դէմ։ Իմ բանակներս մարդկային արիւնին մէջ կը պարտուին 606 ի, սընդիկի և պիզմութի զէնքերուն շնորհիւ։ Իմ միակ ապաւէնս էր մարդկութեան ջղային դրութիւնը։ Ահա հոդ է որ Մալարիան իմ գործս կ'ուրէ և յաղթանակս պարտութեան կը փոխէ. հոդ չէ՞։ Ես որոշած եմ չվհատիլ. նոր ուժերով պիտի անցնիմ յարձակողականի, պիտի դրաւեմ նոր դիրքեր և նորագոյն զէնքերով պիտի յաղթեմ և՛ 606 ին, և՛ պիզմութին և անդիկին։ (Դրափահարութիւն)։

Թող մարդիկ Շօռէններ, Վասէրմաններ և այլ դիտուններ արտադրեն։ Հոդ չէ, իմ քաջ թրէբոնէմներս պիտի յաղթեն։

ՄԱՀԸ.— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ, դիտենք, կը սիրես շատախօսութիւն ընել։ Ժամանակը սուղ է, ուրիշները լսենք։ Գնդապետ Տիֆթէրիա, խօսքը քուկդ է։

ԳՆԴ. ՏԻՖԹԷՐԻԱ (կեղծվաշկ-գուշպօղան).— Տէր Սպարապետ և Զօրականներ, լսեցէք ինձ։ Մեր վերջին ժողովին մէջ, կը յիշէք անշուշտ, ձեզի պատմած էի թէ ինչպէս Ջարդուեցան քաջարի բանակներս հակաթոյն շիճուկի (սէրում) անանխընթաց յարձակողականին ընթացքին։ Դիմադրութիւնը անկարելի դարձաւ, ստիպուեցայ նահանջել նախապէս որոշեալ գծի մը վրայ։ Ջանացի վերակազմել զօրագունդերս, կրկին յարձակողականի անցնելու համար։ Ամեն մը յաջողեցայ և պահ մը յաղթանակը մօտալուտ թուեցաւ ինձ։ Սակայն, (ցասուցելով) ա՜խ սա դիտունները . . . ։ Շիք անունով դիտուն մը այնպիսի դիւտ մը (Շիքի փորձը) հնարեց, որ ոչնչացուց զիս։ Ան իր դիւտին շնորհիւ յաջողեցաւ օր առաջ դուշակել իմ յարձակման ծրագիրներս և զանոնք վիժեցուց թոյն—հակաթոյնով։ Այսպէս, մարդիկ ամէն օր հազարաւոր երախաներ կը պատուաստեն և զանոնք կը սպառազինեն։ Իմ յարձակումներս ի դերեւ կ'ելլեն, որովհետեւ պատուաստուածները անխոցելի կը դառնան իմ արձակած թունաւոր նետերուս։ Ահաւասիկ կացութիւնը, ընկերներ։ Ես իմ պարտականութեանս մէջ չեմ թերացած. բայց բախտը չի ժպտիր ինձ։ Եթէ նորագոյն զէնքերով չզինէք իմ բանակներս, անոնք շուտով պիտի սրրուին և ոչնչանան։

ՄԱՀԸ։— Դուն ալ սեւ լուրեր կը բերես, Գնդապետ։ Իմ յոյսս քու վրադ էր։ Դուն որ մանուկներուն մեծագոյն թշնամին էիր, այժմ

դարձեր ես անատամ շուն մը, խածնելու անկարող։ Վա՜յ ինձ, վա՜յ ինձ։ Հապա դուն, Զօրավար Հարսանիթ (գըղամրգ), դուն ի՞նչպէս ես, ինչե՞ր եղած են քու յաղթանակներդ։ Դուն որ հազարաւոր մայրեր լացուցեր ես, անոնց հոգեհատորները սեւ հող իջեցնելով, դո՞ւն ալ չունիս բարի լուր մը։

ԶՕՐ. ՀԱՐՍԱՆԻԹ.— (Ոտքի կ'ելլէ եւ գուռոդ կեցուածքով կը պատասխանէ)։ Տէր Սպարապետ, ես կը գործեմ անձայն և անշշուկ։ Կ'օգտուիմ մարդոց տգիտութենէն և նախապաշարումներէն։ Անոնք «Հարսանիթը վտանգաւոր չէ» ըսելով լաւ չեն պաշտպաներ իրենց ճակատը դէմս և ես այդ պարագայէն օգտուելով կը յարձակիմ անոնց վրայ։ Թոքատապ, ականջատապ, ցնցղատապ և փորհարութիւն յառաջ բերելով կը փճացնեմ հազարաւոր երախաներ, կը նիհարցնեմ և ուժաթափ կ'ընեմ զանոնք ու այսպէս՝ դեռին կը պատրաստեմ Զօր. Թոքախտին համար։ Հարսանիթէն ապաքինողներ աւելի շուտ տեղի կուտան Թոքախտի զինուորներուն առջեւ։ Գիտունները տակաւին չեն կարողացած իմ ծրագիրներուս տեղեակ ըլլալ։ Անոնց մանրացոյցները դեռ չեն կրցած տեսնել իմ քաջարի զինուորներս։

ՄԱՀԸ.— Ապրիս Զօրավար Հարսանիթ։ Դուն ալ յետ այսու մարաջախտութեան աստիճանով պիտի պատուուիս։ (Նշան մը կը կախէ ուսին)։ Այո՜, գոհ եմ ես քու գործելակերպէդ, շարունակէ այսպէս, իմ հաւատարիմ Զօրավարս։ (Կը համբուրէ ճակտէն)։ Հապա՜ դուն, Հազարապետ Ծաղկախտ, խօսէ՛։

ՀԱԶ. ԾԱՂԿԱԽՏ (Զիչէք).— Տէր Սպարապետ, ընկճուած և ծերացած զինուորականէ մը ի՞նչ կ'ակնկալէք։ Իմ ծառայութիւններս մոռցուած են ու ես անկիւն մը նետուած եմ անպէտ քուրջի նման։ Ես որ հարիւրաւոր ճակատամարտներ շահած եմ, ես որ հարիւր հազարաւորներ դերի տարած եմ, ես որ միլիոնաւորներ ջարդած եմ, մնացած եմ սոսկ հասարակ հազարապետ մը, առանց աստիճանի բարձրացումի։ Աւա՜ղ փառացս անցաւորի։ Այժմ կացութիւնը փոխուած է։

Ա՜խ, ի՜նչ ըսեմ բժիշկ Ճէննէրին, որ իր հնարած պատուաստումով, դերեզմանս փորեց և վերջակէտը դրաւ իմ փառքիս և մեծութեանս։ Ատելով կ'ատեմ քաղաքակրթուած ժողովուրդները, որոնք ինծի դէմ մասնաւոր հակակրութիւն ունին։ Անոնք ջերմապէս կը հաւատան պատուաստումին և պզտիկութենէ սկսեալ կը պատուաստուին։ Արեւելքի ժողովուրդներուն մէջ բաւական աւեր կը գործէի. բայց անոնք ալ սկսան հասկնալ պատուաստին արժէքը։ Մասնաւորաբար Հայերը համոզուած յեղափոխականներ են և կը դրծադրեն պատուաստումը։ Աւա՜ղ . . . այլեւս անոնց մէջ ծաղկաւեր դէմքերու չէք հանդիպիր։ Ես վերջացուցի, ի նձպէս ա նատամ ծե-

բուկէ մը ասկէ աւելին մի ակնկալէք։ Իմ մէկ ոտքս գերեզմանն է արդէն։ (կը նստի)։

ՄԱՀԸ.— Հարիւրապետ Շաքարախտ, խօսքը քուկդ է։ Դուն ալ գունատ կ'երևիս։ Ըսէ, դուն ինչ ունիս մեզի աւետելիք...։

ՀԱՐԻՒՐԱՊԵՏ ՇԱՔԱՐԱԽՏ.— Տէր Սպարապետ և յարգելի պաշտօնակիցներ։ Ես ալ կը գործէի անձայն և անշշուկ։ Բանակատեղիս հաստատած մարդոց պանքրէասին մէջ, (pancréas, ստամոքսին կից գեղձ մը), ամէն օր պղտիկ արշաւանքներ կը կատարէի և առատ կողոպուտ կը քաշէի։ Մարդիկ դեռ նոր սկսած էին սոսկալ իմ գործած նախճիրներէս և գողալ իմ անունէս։ Կացութիւնը փոխուեցաւ։ Քանատացի բժիշկ մը, Տօքթ. Պէնթինկ, լրտեսեց զիս և գտաւ բանակատեղիս։ Շուտով կատարելագործեց ինսուլինը, որ Գերմանացիներուն 42 նոց թնդանօթէն աւելի աւերներ սկսաւ գործել մեր շարքերուն մէջ։ Եւ պարտուեցայ. մարդիկ սկսան ծաղրել զիս։ Վա՜յ պարտեալիս։ (կը նստի)։

ՄԱՀԸ.— Հէ՜յ զօրականներ։ Ամո՜թ, ամօթ ձեզի, բոլորդ ալ պարտութիւն կը պատմէք։ Ձեր սէջը չկա՜յ մէկը, որ բարի լուրեր ունենայ։ Մոռցայ։ Մենք դեռ չլսեցինք գնդապետ Սքարլաթինը։ Ոտքի գնդապետ Սքարլաթին։ Քեզ լսենք։

ԳՆԴ. ՍՔԱՐԼԱԹԻՆ.— Ընկերներ։ Ձեզի ծանօթ է թէ ի՛նչպէս ես կը փճացնէի մարդկանց թոքերը, երիկամունքը, ականջին ոսկորները։ Դուք գիտէք թէ ես ինչ աւերներ գործած եմ...։ Պատմութեան կը պատկանին ատոնք։ Գիտունները հնարեցին Տիֆի փորձը։ Այդ փորձով պաշարեցին զիս և յետոյ իրենց հնարած չիճուկով (սէրում) ընաջնջեցին զօրքերս։ Այժմ ես առանց զօրագունդի գնդապետ մըն եմ։ (կը նստի)։

(Մահը բարկութեամբ ոտքի կ'ելլէ եւ կ'ատենախօսէ)։

ՄԱՀԸ.— Զօրականներ, լսեցի բոլորդ ալ։ Մեր կացութիւնը խախուտ է։ Ըստ ձեր բերած տեղեկութիւններուն, Կեանքի բանակները ամէն տեղ յաղթական են։ Բժշկութիւնը և գիտութիւնը ձեռք ձեռքի տուած կը քանդեն մեր խրամներն ու մեր պատնէշները։ Մեր բանակը արդէն սկսած է նահանջել։ Սակայն պէտք չէ յուսահատինք։ Փիչ մը կորով, քիչ մը հաստատամտութիւն. դրոհ մը ևս և մենք կը յաղթենք, իմ քաջարի զօրականներս։

Օ՛ն, ուրեմն, դացէ՛ք և ձեր բանակները վերակազմեցէք, անհրաժեշտ եղած պիտոյքները և զէնքերը պիտի դրուին ձեր տրամադրութեան տակ։ Հաւաքենք մեր բոլոր պահեստի ուժերը և սկսինք վերջնական յաղթանակի դրոհը։ Ոտքի՛, զօրականներ, երթանք մեր նուիրական պարտականութիւնը կատարելու։ Օն ոտքի՛, դէպի գործ։

(Զօրականները ոտքի կ'ելլեն եւ բոլորը միաբերան)

— Կեցցէ մեր Սպարապետը։

(երբ մեկնելու կը պատրաստուին, բեմին մէկ կողմէն կը սկսի զօրանցքը կեանքի ուժերուն, ֆերմակ հագուած սիրուն աղջիկներ եւ տղաքներ, իրենց կրծքերուն վրայ գրուած փայլուն գիրերով), *Մաքուր Մնունդ, Արեւ, Մաքուր և Անաղարտ Օդ, Ծաղկախտի Պատուաստ, Հակաթոյն, Մաքրութիւն, Բաղնիք, Գիտական Նորութիւններ եւն. եւն։*

Թափորը կը սկսի շրջիլ մահուան սպայակոյտին բոլորտիքը մինչ անոնք սարսափահար կը դիտեն եւ յետոյ գոռում գոչումներով կը դիմեն փախուստի։ Մահը կը մնայ առանձին, շրջապատուած կեանքի եւ բժշկական գիտութեան զինուորներէն։

Մահը կը խելագարի, առանձին թողուած հրամանատարի մը պէս աջ, ձախ հրամաններ կ'արձակէ, բայց ի զո՛ւր։ Ամէն կողմէ կը ծաղրուի։ Ցետոյ յուսահատ եւ ճարահատ իր սուրը կը քաշէ, կ'իյնայ անոր վրայ ու կը սեռնի։

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ

ՎԵՐՋ

Բժ. Ա. Ս. ԱԲԷԼԵԱՆ

ՅՂԻ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(Երկրորդ և վերջին մաս)

Դժբախտաբար առողջապահական պարզ հրահանգները բաւական չեն ամէնուն համար։ Բնականոն յղութենէն դուրս, կան այն տեսակ բացառիկ պարագաներ, երբ անհրաժեշտ կը դառնայ, որ բժիշկը քայլ առ քայլ հետեւի յղութեան ընթացքին, որպէսզի պէտք եղած միջոցները ձեռք առնելով կարենայ ազատել թէ մօրը և թէ տղուն կեանքը։

Բարդութիւններու պատճառ կրնան ըլլալ մայրը, տղան և «ընկերը» թաղանթներով միասին։

Մօրը յատուկ բոլոր հիւանդութիւնները իրենց ազդեցութիւնը ունին յղութեան ընթացքին և սաղմին վրայ։

Այսպէս՝ թոքախտը, սրտի հիւանդութիւնները, միզային գործարաններու բորբոքումը, ալպիւմինը, սիֆիլիսը, ջերմամիզութիւնը, կոնքի ոսկորներու անբնականութիւնը, արգանդի ուռերը, ալքոլա-